



# Ճ Հ Ս Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
2014 թ. թիվ 20

## ԱՆԴՐԱԴԱՐՁ ՔԱՂԾԱՌԱՅՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՆ Կարծես թե պայքարը հասավ տրամաբանական ավարտին

Վերջին 5 տարիների ընթացքում ՃՀՍ տեղեկագրի գրեթե յուրաքանչյուր համարում լուսաբանել ենք քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման հարցը:

Պետհիմնարկների ճյուղային հանրապետական արհմիության՝ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացմանն ուղղված առաջին քայլը 2008 թվականին էր, երբ արհմիության բարձրագույն մարմնի՝ համագումարի 114 պատվիրակները բազմահազար քաղծառայող-արհմիության անդամների դիմում բողոքներին ընդառաջ որոշեցին ուղերձով հանդես գալ հանրապետության ղեկավար մարմինների առջև: Ուղերձի հուսադրող պատասխանը աստիճանաբար տեղի տվեց. իշխանությունների անտարբերությունը որակյալ, բարձրագույն մասնագիտական կրթությամբ, մրցույթներ և ատեստավորումներ անցած, արհեստավարժ մասնագետներին արժանապատվորեն վարձատրելու հանդեպ ստիպեց ճյուղային արհմիության նախկին և ներկա նախագահներին բազմիցս խնդրել, առաջարկել, պահանջել համապատասխան մարմիններից, անգամ էլեկտրոնային ստորագրահավաք կազմակերպել՝ խնդրին կարևորություն տալու և գործնական քայլերի անցնելու:

Բազմահազար քաղծառայողների արժանապատիվ վարձատրության խնդրով դիմեցինք նաև մեր միջազգային գործընկերներին՝ ակնկալելով դրսի արհմիութենական ուժերի դրական ազդեցությունը խնդրի կարգավորման հարցում:

Ներկայացնում ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի՝ Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի նախագահ Վլադիմիր Մավչենկոյի գրությանն ի պատասխան նամակը համառոտ.

«Աշխատանքի արժանապատիվ պայմանների ապահովման և հատկապես արդարացի վարձատրման խնդիրները մշտապես գտնվել և գտնվում են պետության ուշադրության կենտրոնում: Հատկանշականն այն է, որ վերջին տարիներին իրականացված աշխատանքները արդեն ունեն հստակ արդյունքներ: Մասնավորապես՝ 2013թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Պետական պաշտոնատար անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքով տրվում են պետական պաշտոնատար անձանց աշխատանքի միասնական, արդյունավետ և արդարացի վարձատրման լուծումները: Այդպիսով՝

1. 2014թ. հունվարի 1-ից ՀՀ պետական կառավարման համակարգում կներդրվի աշխատանքի վարձատրության միասնական կարգ

2. լիովին կկարգավորվեն ինչպես հիմնական աշխատավարձերի և հավելավճանների, այնպես էլ սոցիալ-աշխատանքային հիմնական երաշխիքների ապահովման մեխանիզմները

3. աշխատանքի վարձատրության միասնական համակարգում կսահմանվի կապ բազային աշխատավարձի և ՀՀ նվազագույն աշատավարձի միջև

4. 2014թ. հուլիսի 1-ից ՀՀ պետական կառավարման համակարգում աշխատավարձը կավելանա միջինը 48%-ով:

Բացի այդ, համաձայն ՀՀ կառավարության 2013-2017թ.թ. ծրագրի և կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ մինչև 2017թ. նվազագույն ամսական աշխատավարձը յուրաքանչյուր տարի կավելանա և կկրկնապատկվի 2013թ. հունվար-հունիս ցուցանիշների համեմատությամբ (35000)»:

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր բաղադրիչը 2014թ.-ից գործողության մեջ մտնելու կապակցությամբ ՃՀՄ նախագահը դիմեց Երևանի քաղաքապետին՝ քաղաքապետարանի՝ 1974թ.-ից հետո ծնված աշխատողների փաստացի եկամուտների նվազումը կանխելու համար վերջիններիս աշխատավարձերը գոնե գանձվող գումարի չափով բարձրացնելու առաջարկով:

Քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանից ստացված պատասխանը ոչ այլ ինչ էր, եթե ոչ օրենքի պարզունակ մեկնաբանություն. մասնավորապես. «Պարտադիր կուտակային բաղադրիչի ուժի մեջ մտնելու արդյունքում աշխատավարձի նվազեցում տեղի չի ունենում՝ մասնակցի աշխատավարձը չի փոփոխվում, այլ դրա մի մասը փոխանցվում և կուտակվում է նրա անհատական կենսաթոշակային հաշվին՝ կենսաթոշակային տարիքում ստանալու համար, ուստի Երևանի քաղաքապետարանի 1974 թվականից հետո ծնված աշխատակիցների աշխատավարձի բարձրացման անհրաժեշտություն չի առաջանում»:

Ի դեպ, նմանատիպ գրություն-առաջարկներով դիմեցինք նաև ՃՀՄ անդամ տարածքային միություններին՝ անդամ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին նմանատիպ առաջարկով դիմելու համար: ՀՀ ՄԴ որոշմամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 76-րդ և 86-րդ հոդվածի 3-րդ կետի կասեցումից անմիջապես հետո վերստին դիմեցինք բոլոր անդամ կազմակերպությունների նախագահներին՝ մինչև ՄԴ վերջնական որոշումը 1974-ից հետո ծնված երիտասարդների պարտադիր կուտակային վճարները չպահելու և չփոխանցելու խնդրով գործատուներին դիմելու առաջարկով:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ՃՀՄ նախագահը շնորհակալություն հայտնեց Երևանի քաղաքապետի տեղակալին օրենքի յուրովի մեկնաբանության համար և հույս հայտնեց, որ «Երևանի քաղաքապետարանը կհարգի քաղաքապետարանի և վերջինիս ենթակայությամբ գործող մյուս կազմակերպությունների աշխատողների իրավունքը և աշխատողներից չի պահանջի ընտրել վերոնշված ֆոնդերը»:

## ԻՆՉ ԲԵՐՔԱԲԵՐ ԱՌԱՆՑ ՁՐԻ

ՃՀՄ նախագահը, ընդգծելով Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր գյուղի ստրատեգիական նշանակությունը և բնակչության անելանելի ծանր վիճակը՝ գյուղապետի խնդրանքին ընդառաջ դիմեց ՀՀ վարչապետին: Խնդրո առարկան հետևյալն էր. «Համայնքի ջանքերով Բերքաբեր գյուղից 17 կմ հեռավորության վրա հայտնաբերված աղբյուրից ջրագծի կառուցման արժեքը հաշվարկվել է 170 մլն., ինչն, ըստ երևույթին ջրագծի կառուցումն անհնարին է դարձրել: Սահմանամերձ գյուղի բնակիչները շարունակում են մնալ առանց խմելու ջրի, ինչի հետևանքով աստիճանաբար լքում են բնակավայրը: Նշված պատճառով դպրոցի աշակերտների թիվը ընթացիկ տարում /2013թ./ արդեն իսկ նվազել է տասով: Ճյուղային արհմիությունը, ընդգծելով սահմանամերձ գյուղի ստրատեգիական նշանակությունը և բնակչության անելանելի ծանր վիճակը, դիմում է Ձեզ վերոնշված հարցը հատուկ ուշադրության արժանացնելու առաջարկով»:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պատասխանը՝ համառոտ. «...Բերքաբեր համայնքը ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ընկերությունների կողմից չի սպասարկվում և համակարգում իրականացվող ներդրումային ծրագրերում ընդգրկված չէ: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է գյուղապետարանի կողմից»:

## ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՄԽԱՆ

**ՀԱՐՑ** - Թույլատրվու՞մ է արդյոք ամենամյա արձակուրդը փոխարինել դրամական հատուցմամբ:

**ՊԱՏԱՄԽԱՆ** - Չի թույլատրվում ամենամյա արձակուրդը փոխարինել դրամական հատուցմամբ: Սակայն աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում, եթե աշխատողի մոտ կան չօգտագործած ամենամյա արձակուրդի կուտակված օրեր, ապա դրանց համար վճարվում է հատուցում:

Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով:

Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

## ԹԵԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ «ԹԵԺ ԼԵՌՈՒՄ»

**Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը**  
**ս.թ. նոյեմբերի 16-17-ը գումարեց խորհրդի հերթական նիստը: Խորհրդի անդամների հանդիպման վայրը**  
**Վանաձորի «Թեժ լեռ» հանգստավայրն էր, որտեղ անցկացված նիստը համատեղվեց**  
**նաև մասնակիցների 1-օրյա հանգստով:**

ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանը ներկայացրեց արտահերթ համագումարից հետո ՃՀՄ համառոտ գործունեությունը, շնորհակալություն հայտնեց մայիսի 1-ին և հոկտեմբերի 7-ին անցկացված երթերի ակտիվ մասնակիցներին և առհասարակ բոլոր այն նախագահներին, ովքեր ոչ մի ջանք չեն խնայում համախմբելու արհմիության անդամներին: Նախագահի խոսքում նշվեց, որ տվյալ ժամանակահատվածում ՃՀՄ-ն ձևավորել է իր կայքը ([www.arhmiutyun.org](http://www.arhmiutyun.org)), միջազգային կառույցների հետ բանակցությունների արդյունքում 2 սեմինարներ են անցկացվել երիտասարդների համար, ՃՀՄ-ն նախաձեռնել է էլեկտրոնային ստորագրահավաք քաղաքացիների բազային աշխատավարձի բարձրացման համար, ՃՀՄ նախագահն ընդգրկել է Երևանի տրանսպորտի ուղեվարձը քննարկող հանձնաժողովի կազմում և այլն:

Ա. Ասատրյանը կոչ արեց բոլորին ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՃՀՄ բոլոր նախաձեռնություններին. արհմիության անդամներն էլ այդպիսով կիրառելվեն արհմիության գործունեությանը, կլինեն միասնական ու կնպաստեն նաև արհմիության ծավալմանը: Չէ՞ որ արհմիության ուժը միասնության մեջ է, իսկ ուժեղ արհմիությունը ուժեղ քաղաքացիական հասարակության գրավականն է:

Կատարված աշխատանքը բավարար համարելով՝ խորհրդի անդամներն անցան ՃՀՄ նախագահության ընտրությանը: ՃՀՄ նախագահը ներկայացրեց նախագահության գործառույթները, որոշվեց նախագահություն ընտրելու ձևը, անդամների քանակը՝ 13, առաջարկվեցին թեկնածություններ: Առաջադրված թեկնածուներից նախագահություն ընտրելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքում ընտրվեցին նախագահության նոր անդամները:

Այսպիսով՝ ՃՀՄ նախագահության՝ 2013թ. նոյեմբերի 16-ին ընտրված անդամներն են՝ Անահիտ Ասատրյան՝ ՃՀՄ նախագահ (ի պաշտոնե), Ռոբերտ Չոբանյան՝ ՀՀ ՄԴ աշխատողների արհմիության նախագահ, Արտաշես Հովհաննիսյան՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատողների արհմիության նախագահ, Վարսիկ Ծատուրյան՝ ՀՀ ոստիկանության ոչ ծառայողների արհմիության նախագահ, Նորա Մելքոնյան՝ ՀՀ ԿԱ ՊԳԿԿ աշխատողների արհմիության նախագահ, Նելսոն Մարգարյան՝ Մարտունու տարածքային արհմիության նախագահ, Անուշ Ասատրյան՝ Մասիսի տարածքային արհմիության նախագահ, Անդրանիկ Հակոբյան՝ Արարատի տարածքային արհմիության նախագահ, Ժենյա Թամրազյան՝ Դիլիջանի տարածքային արհմիության նախագահ, Մարգարիտա Պետրոսյան՝ ՀՀ ԱՎԾ աշխատողների արհմիության նախագահ, Գևորգ Գևորգյան՝ Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհմիության նախագահ, Ջուլետա Գրիգորյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատողների արհմիության նախագահ, Ծովինար Մարտիրոսյան՝ Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհմիության նախագահ:

Շնորհավորում ենք ՃՀՄ նախագահության նորընտիր անդամներին և մաղթում արհմիութենական շարժմանը նպաստող արդյունավետ գործունեություն:

## ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՄԽԱՆ

**ՀԱՐՑ** – Աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն ի՞նչ հետևանքներ է առաջացնում:

**ՊԱՏԱՄԽԱՆ** – Աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում աշխատողը ենթարկվում է կարգապահական պատասխանատվության:

Եթե աշխատողը երկու անգամ ենթարկվել է կարգապահական տույժի և այդ տույժերը հանված կամ մարված չեն, ապա նոր կարգապահական խախտում թույլ տալու դեպքում գործատուն իրավունք ունի առանց ծանուցելու լուծել աշխատանքային պայմանագիրը: Նման դեպքերում գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները, այսինքն՝ մինչև պայմանագրի լուծումը աշխատողից վերցնել բացատրություն կատարած խախտման համար:

## ԱՆՑՈՒԴԱՐԶ

Ճյուղային միության աշխատակիցները մշտապես մասնակցում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ հատկապես կուտակային բաղադրիչի դեմ պայքարող նախաձեռնության միջոցառումներին: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ մեր արհմիության անդամներին կոչ ենք անում միանալ կազմակերպվող միջոցառումներին՝ ի պաշտպանություն սեփական իրավունքների:

\* \* \* \* \*

Ճյուղային միության նախագահը “Դեմ եմ” քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների հետ համատեղ հրավիրվել է ասուլիսի, որտեղ պարզաբանել ու ներկայացրել է “Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի և դրա հետ կապված ՀՀ ՄԴ աշխատակարգային որոշմանն առնչվող հարցերը: Ասուլիսի տեսագրությունն ամբողջությամբ կարելի է դիտել [arhmiutyun.org](http://arhmiutyun.org) և [hamk.am](http://hamk.am) կայքերում:

\* \* \* \* \*

“Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքի շուրջ իր դիրքորոշումն է արտահայտել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան, մասնավորապես՝ ՀԱՄԿ-ի նախագահը դիմել է ՀՀ նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի պետը պարզաբանումներ է ներկայացրել օրենքի և դրանից բխած տարակարծությունների շուրջ (մանրամասներին կարող եք ծանոթանալ [hamk.am](http://hamk.am) կայքում):

\* \* \* \* \*

ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանը հանդիպում է ունեցել ՀՀ Արարատի մարզպետ Ա. Գրիգորյանի հետ: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձևավորվել առաջիկայում Արարատի մարզի անդամ կազմակերպությունների համար սեմինար անցկացնել, որտեղ կպարզաբանվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի ու դրույթների վերաբերյալ հարցերը:

\* \* \* \* \*

ՃՀՄ նախագահության հերթական նիստում սահմանվել է արհմիության անդամների հանգստի կազմակերպման նոր կարգը. Ծաղկաձորի “Ռիպա” առողջարանի հանգստի ծառայություններից օգտվելու համար արհմիության անդամները կվճարեն 8000 դրամ, որից մինչև 2000-ը կոլեկտիվ հանգստի դեպքում կարող է տրամադրել ՃՀՄ-ն: “Պրոֆտուր” ՍՊԸ-ի հանգստի ծառայություններից կոլեկտիվներով օգտվելու դեպքում ևս մեր արհմիության անդամները կարող են ստանալ զեղչեր:

\* \* \* \* \*

Անցյալ տարեվերջին Երևան քաղաքի մեր արհմիութենականները թիմային առաջնությամբ մրցեցին շախմատի խաղատախտակների առջև: Մասնակիցներն էին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԱ ՊԳԿՎ-ի, Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ, Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, ՀՀ զբաղվածության պետական ծառայություն գործակալության արհեստակցական կազմակերպությունների թիմերը: Առաջին պատվավոր տեղն զբաղեցրեց Երևանի քաղաքապետարանի թիմը, երկրորդ տեղում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, երրորդ տեղում՝ “ՀՀ զբաղվածության պետական ծառայություն” գործակալության թիմը:

6 խաղ-6 հաղթանակ ցուցանիչով լավագույն խաղացողը Կամո Պողոսյանն էր՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից:

\* \* \* \* \*

ՃՀՄ Երևան քաղաքի անդամ կազմակերպությունները տարին ամփոփեցին “Լուքսոր” կարակետ ակումբում Ճյուղային միության կազմակերպած մրցույթով: Երգող-մրցողները ներկայացնում էին Երևանի քաղաքապետարանի, Նոր Խարբերդի մանկատան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀՀ ոստիկանության ոչ ծառայողների արհմիությունները: Մասնակիցների քվեարկության արդյունքում լավագույնը ՀՀ ոստիկանության ներկայացուցիչն էր:

\* \* \* \* \*

Ճյուղային հանրապետական միության ինտերնետային կայքի համալրման համար անհրաժեշտ են տեղեկություններ անդամ կազմակերպությունների մասին: Մեզ տեղեկություններ չտրամադրած ղեկավարներին առաջարկում ենք ՃՀՄ-ի [arhmiutyun.org](http://arhmiutyun.org) կայքում անդամ կազմակերպության դատարկ պատուհանները լրացնելու համար Ձեզ հարմար տարբերակով տրամադրել նշված տեղեկությունները:

Ուրախ կլինենք նաև ստանալ տեղեկություններ Ձեր կազմակերպած միջոցառումների և առհասարակ գործունեության մասին: